

## ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2011թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Գ. Աշուղյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Տեղեկատվական ազատությունը Հայաստանում 2011» մոնիթորինգի արդյունքների ներկայացմանը և [www.givemeinfo.am](http://www.givemeinfo.am) կայքի շնորհանդեսին,
- ✓ 2011թ. սեպտեմբերի 23-24ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի թվով 42 աշխատակից մասնակցել են ՀՀ Գեղարքունիկի մարզի գ. Չկալովկայում մարզային վիճակագրական գործակալությունների համար կազմակերպված «Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման նախապատրաստում» խորագրով սեմինարին,
- ✓ 2011թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հիդրոօդերևութաբանական տեղեկագրի ներկայացում» աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2011թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի ընդլայնված գենդերային խմբի հանդիպմանը,
- ✓ 2011թ. հոկտեմբերի 19-20ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը մասնակցել է ք. Երևանում Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելության գրասենյակի կողմից կազմակերպված «Եվրամիության միգրացիոն իրավունք» թեմայով վերապատրաստման դասընթացին,
- ✓ 2011թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ ԱՎԾ Նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «ՀՀ ժողովրդագրական մարտահրավերները և դրանց դիմակայելուն ուղղված ՀՀ Կառավարության քաղաքականությունների արդիականությունը» խորագրով համաժողովին,

- ✓ 2011թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Երեխաների իրավունքների կոնվենցիայի զեկույցի շուրջ քննարկումներին: